Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Դարպասի միջն. դպրոց

Թեմա՝ Ուսուցման ավանդական և փոխներգործուն մեթոդների կիրառումը առարկայի շրջանակներում

Վերապատրաստող, մենթոր՝ Լուսինե Քալաշյան

Ուսուցիչ՝ Անի Պապինյան

2023

Բովանդակություն ----------2
Նպատակը և հետազոտական հարցը----------3
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը թիրախային խմբի համար----------3
Ուսուցման մեթոդի ընտրության մասին----------5
Դասախոսություն----------5
Համագործակցային ուսուցում----------5
Մտքերի տարափ կամ մտագրոհ----------6
Վենի դիագրամ ----------6
ԳՈՒՍ----------7
Հնգյակ----------8
Քառաբաժան----------9
Օգտագործված մեթոդները----------10
Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին----------10
Եզրակացություն----------13
Օգտագործված գրականության ցանկ----------16
Հավելվածներ----------15

Նպատակը և հետազոտական հարցը

Նպատակը-Ամեն դաս, ամեն դասարան կենդանի օրգանիզմ է: Ուսուցիչը պետք է ոչ միայն իմանա ուսուցման մեթոդներ և հնարներ, այլև ռեժիսորի նման կարողանա յուրաքանչյուր դասը դարձնել ինքնատիպ խաղ, հետաքրքիր պրոցես՝ գտնելով այդ մեթոդներն ու հնարները կիրառելու խելամիտ ձևերը: Հետազոտության նպատակն է գտնել այնպիսի մեթոդներ ու հնարներ, որոնք հետաքրքիր կդարձնեն ուսումնառությունը 21-րդ դարի քաղաքացու համար, կկարողանան կենտրոնացնել նրա ուշադրությունը, կդարձնեն նրան ակտիվ սովորող: Միաժամանակ կարևոր է ներթափանցել սովորողի զգայական մակարդակ, առաջացնել հույզեր, դարձնել նրան գեղեցիկը նկատող, զարգացնել վերլուծական մտածողություն:

Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը թիրախային խմբի համար

Պատահական չէ, որ Նոբելյան մրցանակի դափնեկիր Հերբերտ Սայմոնը շրջանառության մեջ է դրել «ուշադրության տնտեսություն» արտահայտությունը: Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների, գործունեության տեսակների կողմից: Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է: Մարդկային ապրելակերպում ընդունված է, որ ի տարբերություն չափահասների՝ երեխաները ոչնչով զբաղված չեն: Հետևաբար՝ նրանք պետք է պարապեն, սովորեն: Այսօր երեխաների կյանքին բիզնես ինդուստրիաների ակտիվ միջամտության արդյունքում աշակերտներն այլևս պարապ չեն: Նրանք զբաղված են ֆուտբոլային հանդիպումներ, սերիալներ դիտելով ու տարատեսակ խաղերով: Աշակերտներին

բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը: Մի խոսքով՝ սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը:Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ: Իսկ ինչն է խանգարում սովորողին կենտրոնացնել ուշադրությունը: Թերևս պատճառներից առաջինն այն է, որ նա չի գիտակցում թեմայի կարևորությունը և կիրառելիությունը կյանքում: Մյուս պատճառը կարող է լինել ոչ հետաքրքիր մատուցումը:Անուշադրության պատճառ կարող են լինել նաև հոգնածությունը, առողջական խնդիրները, անբարենպաստ միջավայրը, ներանձնային հարաբերությունները դասարանում և պարզապես չհասկանալը:

Հարցը-Ինչպես է ազդում փոխներգործուն մեթոդների կիրառումը ուշադրության կենտրոնացման վրա:

Ո՞ր առանցքային կոմպետենցիան է ուղղված նպատակի ուսումնասիրությունը

Հետազոտությունն ուղղված է հիմնականում **լեզվական և սովորել սովորելու** կոմպետենցիաներին:

Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին

Այս հիմնախնդրին անդրադարձ է կատարվել վերապատրաստման հետևյալ թեմաներով դասընթացներին.

1. Տարիքային հոգեբանություն

Թեմաները՝ Ուսումնառության ոճերը , Անցանկալի վարքի պատճառները

2. Դիրքորոշում և արժեք

3. Համընդհանուր ներառում

4. Առարկայի դասավանդման մեթոդիկա

Ուսուցման մեթոդի ընտրության մասին

Ինչ է մեթոդը: Մեթոդը հունարեն բառ է, որ բառացի թարգմանած նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ: Հանդիպող տարբեր սահմանումներում մեթոդը բնութագրվում է որպես նպատակին հասնելու միջոց: Եթե փորձենք ընդհանրացնել գոյություն ունեցող սահմանումները, կարող ենք ասել, որ այն ուսուցչի և աշակերտի համագործակցությունն է ուղղված ուսումնական նպատակների իրականացմանը: Ուսուցման ընթացքում մեթոդի ընտրությունը կատարում է ուսուցիչը ըստ նպատակահարմարության: Սակայն ընտրությունը չի կարող ինքնանպատակ լինել. այն պետք է ապահովի ցանկալի արդյունք: Ուսուցման մեթոդն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ.

- **Նպատակները և խնդիրները**
- **Բովանդակությունը, ծավալը, բարդությունը**
- **Հետաքրքրությունները**
- **Նյութատեխնիկական պայմանները**
- **Սովորողների թիվը**
- **Այլ գործոններ**

Այս շարքը երկար կարելի է շարունակել: Հմուտ ուսուցիչը կարողանում է ընտրել ճիշտ մեթոդ և անհրաժեշտության դեպքում փոխել այն: Ուսուցման ժամանակակից մեթոդներից քննության են առնվել մի քանիսը.

Դասախոսություն

Այս մեթոդն ունի կայուն կառուցվածք՝ հաղորդվող նյութի ծավալայնություն, նյութի մատուցման տրամաբանություն, գիտելիքների համակարգված բնույթ։Տարբերվում են գիտական- հասարակական և ակադեմիական դասախոսություններ։ Դասախոսությունները նվիրվում են ուսումնական ծրագրի առավել խոշոր և կարևոր բաժիններին։Դասախոսությունը այսօր արդիական բնույթ ունի:

Համագործակցային ուսուցում

Համագործակցությունը թույլ է տալիս սովորողներին ակտիվորեն մասնակցել ուսուցման գործընթացին: Համագործակցությունը սովորողների և ուսուցանվող

նյութի միջև կապ է ստեղծում ՝ օգնելով մտածել ավելի անաչառ: Խմբային աշխատանքները և քննարկումները այս դասավանդման մեթոդի օրինակներն են: Ներկայացն եմ դասավանդման ժամանակակից մի քանի օրինակներ, որոնք կիրառում եմ իմ աշխատանքում:

1. **Մտքերի տարափ** կամ **մտագրոհ**

Այս մեթոդը խմբային աշխատանքի պարզագույն, բայց արդյունավետ մեթոդ է: Խմբի անդամների առջև խնդիր է դրվում . նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետը թեմայի շուրջ: Բոլոր մտքերը ու գաղափարները գրանցվում են մաքուր թղթի կամ գրատախտակի վրա: Այս մեթոդը հաճախ եմ կիրառում դասի խթանման փուլում: Այսպես վեր են հանվում աշակերտների ունեցած գիրտալիքները թեմայի շուրջ: Այստեղ շեշտը պետք է դնել արտահայտվող մտքերի քանակի վրա : Պետք է խրախուսել շատ և բազմատեսակ մտքեր արտահայտելը: Սակայն պետք է հետևել , որ մտքեր արտահայտելու հարցում որևէ մեկի գերակայություն չստեղծվի:



Վենի դիագրամ

Վենի դիագրամը կարելի է օգտագործել նյութի ամփոփման և ընդհանրացման ժամանակ՝ գաղափարները , երևույթները , անձերին միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով:

Երկու հերոսներին բնութագրելու համար արդյունավետ մեթոդ է: Աշակերտները բնութագրելով հերոսներին գտնում են նմանություններ և տարբերություններ:



ԳՈՒՍ(գիտեմ - ուզում եմ իմանալ- սովորեցի). երեք սյունակից բաղկացած մի աղյուսակ է , որը կարող է դառնալ աշակերտի ուղեցույցը նյութը ուսումնասիրելու ժամանակ։Աղյուսակը գծում եմ կամ մեծ թղթի վրա, կամ գրատախտակին։Աղյուսակի կիրառումը հնարավորություն է տալիս լայնածավալ աշխատանք իրականացնելու ՝ անդրադառնալով թեմատիկ խմբի բոլոր տեքստերի բովանդակությանը, հերոսների հիմնական առանձնահատկություններին, բառապաշարին , արժեքներին։Սովորողները ոչ միայն ձեռք են բերում գիտելիքներ, իրենց մեջ զարգացնում են կարողություններ , այլև հասունանում են որպես սովորողներ, զգում են սովորելու իրական հաճույքը:

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի

Հնգյակ

Հնգյակը բանաստեղծություն է , որի ստեղծման համար անհրաժեշտ է ստացված տեղեկատվությունը , գիտելիքները համադրել ու արտահայտել դիպուկ արտահայտություններով: Այն ունի ուղեցույց. այն է՝ • Առաջին տողը մեկ բառ է, որը նկարագրում է հասկացությունը(գոյական): • Երկրորդ տողը բաղկացած է երկու բառից(ածականներ, որոնք բնորոշում են հասկացությունը): • Երրորդ տողը բաղկացած է երեք բառից(արտահայտում են հասկացության գործողություններ): • Չորրորդ տողը բաղկացած է չորս բառից կազմված արտահայտություններից , որոնք ցույց են տալիս հասկացության նկատմամբ զգացմունք կամ վերաբերմունք: • Վերջին տողը մեկ հոմանիշ բառ է , որն այլ կերպ է արտահայտում նույն հասկացությունը:

Հայաստան

հին, նոր

շենացող, մեծացող

Իմ հայրենիքը Հայաստանն է:

Բնօրրան

Քառաբաժան

Ուսուցիչը գրատախտակը կամ թղթի մակերեսը բաժանում է չորս մասի, որտեղ պետք է ամփոփ ներկայացվեն ուսուցանվող նյութի ելակետային հարցադրումներին առնչվող բնութագրումները [1,էջ 74]: Մեթոդական այս հնարը կարելի է կիրառել տարբեր մոտեցումներով՝ նկատի ունենալով աշակերտների տարիքային առանձնահատկությունները, իմացական մակարդակը, հետաքրքրությունների շրջանակը: Ցածր ու միջին դասարաններում կարելի է հետաքրքիր հարցադրումներով, որոնք կկազմեն քառաբաժանի յուրաքանչյուր հատվածի անվանումը, զարգացնել աշակերտների մտահորիզոնը, պատկերավոր մտածողությունը: Օրինակ՝ բնության ընդգրկուն նկարագրությամբ որևէ բանաստեղծություն վերլուծելուց հետո ուսուցիչը կարող է հետևյալ հարցադրումներով էլ ավելի հետաքրքիր և արդյունավետ դարձնել դասընթացը. 1 . Ի՞նչ եմ տեսնում: 2. Ի՞նչ եմ զգում: 3. Ի՞նչ եմ լսում: 4. Ինչպիսի՞ն կլինի բանաստեղծության նկարը: Այս հարցադրումները յուրաքանչյուր աշակերտի հնարավորություն կտան յուրովի մտածելու, տեսնելու բանաստեղծական պատկերի երևակայական նկարագիրը, լսելու բնանկարից յուրօրինակ հնչեղություն ստացող ձայնային ելևէջումները՝ մեղմ քամու սոսափյունը, անձրևի մեղմածոր ձայնը, ձնամրրիկի ահեղագոչ սուլոցը, զգալու բառապատկերի ենթաշերտերում խտացված բանաստեղծական խոհը, նկարելու բանաստեղծությունն իր պատկերային մտածողության դաշտում: Բարձր դասարաններում նշված մեթոդը կարելի է կիրառել նյութի ամփոփման փուլում՝ ավելի ամբողջացնելու համար ուսումնասիրված նյութը: Այսինքն՝ ուսուցիչը պետք է ամփոփման փուլում հստակեցնի անցած նյութի հիմնական գաղափարական հարցադրումները, տվյալ ստեղծագործության գեղարվեստական արժեքը, հեղինակի պատկերակերտման արվեստի առանձնահատկությունները, գրողի աշխարհայացքի, կենսափիլիսոփայության հիմնական շերտերը: Եթե տվյալ

ստեղծագործության մեջ կան խորհրդանշանային պատկերներ, որտեղ խտացված են պատումի հիմնական գաղափարական հարցադրումները [2, էջ110], կարելի է դրանք դիտարկել որպես քառաբաժանի յուրաքանչյուր հատվածի ընդհանուր անվանում: Այնուհետև յուրաքանչյուր խորհրդանիշ-անվանման ներքևի հատվածում անհրաժեշտ է տալ դրա մեկնաբանությունը, բացատրական նկարագիրը: Եզրակացություն: Քառաբաժան մեթոդի կիրառումը նպաստում է ուսուցանվող նյութի առավել խորքային վերլուծությանը, աշակերտների կողմից նյութի տարաշերտ ու ընդգրկուն իմացությանը, գեղարվեստական ստեղծագործության լայնածավալ ներկայացմանը, դասը առավել հետաքրքիր ու բովանդակալից դարձնելուն:[1]

Օգտագործված մեթոդները

Օգտագործվել են **փաստաթղթերի վերլուծություն** և **դիտարկում** մեթոդները

Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/

Հետազոտությունն անց է կացվել աշակերտների շրջանում

Թիրախ խումբ – 8-րդ դասարան

Քանակ-21

Տղա-14

Աղջիկ-7

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին

Աշակերտների շրջանում անց է կացվել անանուն հարցում՝ պարզելու, թե որքանով են դասին ուշադիր: Ստորև ներկայացվում են հարցաթերթիկը և արդյունքները՝ ընդհանրացված ձևով:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հարցումը իրականացվում է Դարպասի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Անի Պապինյանի կողմից

Հարցումն անանուն է: Տվյալները կամփոփվեն ընդհանրացված ձևով:

1. *Արդյոք մի՞շտ եք ուշադիր լսում դասը.*

- Միշտ ուշադիր եմ
- Ոչ միշտ եմ ուշադիր
- Սովորաբար անուշադիր եմ

2. *Ի՞նչն է ձեզ խանգարում, շեղում ուշադրությունը:*

_____

_____

_____

_____

_____

3. *Որո՞նք են դասապրոցեսի նկատմամբ անուշադրության պատճառները.*

- Թեման հետաքրքիր չէ
- Հոգնում եմ
- Չեմ հասկանում
- Կարծում եմ, որ դա կյանքում ինձ անհարժեշտ չէ
- Այլ

_____

_____

_____

_____



Հարցին, թե ինչն է նրանց խանգարում, մեծամասամբ պատասխանել են՝

դասարանի աղմուկը: Եղել են նաև այլ պատասխաններ՝ վատ եմ զգում, հոգնում եմ և այլն:

Փորձ է արվել պարզել նաև դասապրոցեսի նկատմամբ անուշադրության պատճառները, և ստացվել են հետևյալ արդյունքները:



Որպես արտադասարանական ընթերցանության նյութ ընտրվել է Ակսել Բակունցի Միրհավ պատմվածքը: Առաջին անգամ պատմվածքն ընթերցվել է առանց որևէ զգուշացման , որ տեքստի հետ կապված աշխատանք է կատարվելու: Ընթերցումից հետո հանձնարարվել է գրել այն ամենը, ինչ հիշում են տեքստից: Սովորողների մի

մասը դժվարանում էր հիշել իրադարձությունները, ոմանք գրել էին սխալ հաջորդականությամբ, խեղաթյուրված փաստերով: Աշխատանքների որոշ մասը ներկայացված է **հավելված**ում: Ապա հանձնարարվել է գծել քառաբաժան աղյուսակ: Տեքստը ընթերցվել է, սովորողները ընթացքում լրացրել են աղյուսակը: Սովորողները շատ ավելի ուշադիր էին լսում պատմվածքը և որսում տպավորիչ տեսարաններ, լսում ձայներ, զգում այն, ինչ հերոսներն են զգացել: Աշխատանքների որոշ մասը ներկայացված է **հավելված**ում:

Եզրակացություն: Մեթոդը բավականին արդյունավետ է ուշադրության կենտրոնացման գործում:

Առաջարկություն: Կիրառել մեթոդը հատկապես ծավալուն տեքստերի դեպքում:

Այլ տեղեկատվություն

Մինչև մեթոդի արդյունավետությունը փորձարկելը աշակերտների շրջանում անց է կացվել անանուն հարցում: Փորձ է արվել ճշտել, թե որքանով են նրանք ուշադիր հետևում դասին, և որոնք են դասապրոցեսի նկատմամբ անուշադրության պատճառները: Հարցաթերթիկները և ընդհանրացված արդյունքները ներկայացված են **Հավելված**-ում:

Եզրակացություն

Ուսուցման պրոցես ասելով՝ ամենից առաջ հասկանում ենք գիտելիքների հաղորդում,՝ձեռքբերում , մարդու համար կենսական նշանակություն ունեցող կարողությունների, հմտությունների, արժեքային համակարգի դրսևորում: Գիտելիքը ձեռք է բերվում որպես շրջապատի ճանաչման միջոց, որպես գիտելիք կամ տեղեկություն մարդկության անցյալի , ներկայի, ապագայի , նշանավոր դեպքերի , դեմքերի , բնության , բուսական ու կենդանական աշխարհի, գիտության տարբեր բնագավառների ու տեխնիկայի մասին: Տարրական դասարաններում ուսուցման գործընթացում կիրառվում են արդյունավետ մեթոդներ և մոդելներ, որոնք ուսուցվող նյութը դարձնում են մատչելի և դյուրամարս : Հետազոտական աշխատանքը նպաստում է

ուսումնական գործընթացը հեշտացնելու, ուսումնասիրած մեթոդներով դասեր պլանավորելու և հմտորեն կազմակերպելու գործունեությանը: Աշխատանքի ընթացքում խորացան և ամրապնդվեցին մեթոդների արդյունավետ օգտագործման նորանոր ձևեր : Ձևավորվեցին կիրառման հմտություններ: Ուսումնասիրելով մեթոդները ՝ կարելի է ասել , որ դրանց ճիշտ և տեղին կիրառումը հանգեցնում է ուսուցման որակի բարձրացմանը , սովորողի մեջ ձևավորում է նոր գաղափարներ , հետաքրքրություններ: Ուսուցման հիմնական նպատակը բազմապիսի ու բազմակողմանի գիտելիքների հաղորդումն է ու ձեռքբերումը, երեխաների մեջ բոլոր կարգի կարողությունների ձևավորումը: Ժամանակակից մարդուն անհրաժեշտ գիտելիքների ծավալը աճում է խիստ և արագ: Աշակերտների մեջ գործնական կարողությունների մշակման պրոցեսի կազմակերպումը հատուկ արժեք է ստացել: Այս ամենի հիմքում ընկած է ուսումնական գործունեության ճիշտ և նպատակային կազմակերպումը: Ուսումնական գործունեության մեջ կան բազմապիսի մեթոդներ և հնարներ: Այդ մեթոդներն ու հնարները խթանում են ուսուցման արդյունավետությունը: Ուսուցումը ընթանում է աշակերտի կատարած մտածված , հետևողական աշխատանքի շնորհիվ :

Անվանի հոգեբան Ի. Լինհարտը ասել է . << Ճանաչողության բարձրագույն ձևերը ծագում են ոչ թե անմիջական զգայություններից ու ընկալումներից , այլ գործունեության ընթացքում(սովորելիս), զգայա-շարժողական կառուցվածքի հիման վրա, որով և ավարտվում է մտավոր գործողությունը>>: Ուսումնական գործընթացում առաջարկվող մեթոդները տարբեր են: Դասի յուրաքանչյուր փուլում հնարավոր է օգտագործել բազմապիսի մեթոդներ և հնարներ : Անհրաժեշտ է ճիշտ և տեղին կատարել մեթոդի ընտրությունը:Մեթոդի օգտագործումը պետք է չափավորված և կշռադատված լինի. դրանց անտեղի ու չափից ավելի օգտագործումը օգուտի փոխարեն , ընդհակառակն, մեծ վնաս կարող է հասցնել ուսումնական աշխատանքին:

Առաջարկում եմ ՝ ընդլայնել ուսումնական գործընթացում ակտիվ մեթոդների հնարների և խաղերի կիրառումը , ուսումնասիրել և կիրառել նորանոր մեթոդներ,

աշխատել ձևավորող գնահատման շեշտադրմամբ , բացահայտել աշակերտի կարողություններն ու հմտությունները , որոնք հիմք կդառնան ուսումնական գործընթացում, ստեղծել պայմաններ , որոնք կխթանեն ուսուցչի գործունեությունը: Կրթության հիմնական նպատակը աճող սերնդի նախապատրաստումն է ապագային: Ուսուցումը դառնում է դյուրին ,երբ ընթացքը աշակերտի համար գրավիչ է ու հաճելի: Իսկ դրա համար անհրաժեշտ է , որ մենք կարողանանք ըստ նախասիրությունների և ընդունակությունների ճիշտ ընտրել գործունեության ձևը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հերթական ատեստավորման ենթակա մաթեմատիկայի ուսուցիչների մասնագիտական զարգացման դասընթացների ուղեցույց: Երևան, Տիգրան Մեծ հրատ. ՓԲԸ, 2013
2. https://168.am/2018/04/13/934731.html
3. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf
4. https://journals.ysu.am/index.php/Educ-21st-Century/article/download/vol7_no1_2022_pp115-122/7107/15605

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ

Քառաբաժան (1) Mirhav.pdf